

Մարտի 17-ին տեղի ունեցավ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կարգապահական կոմիտեի հերթական նիստը՝ ՀՖՖ Կարգապահական կոմիտեի նախագահ Ռուբեն Սինոյանի նախագահությամբ՝

ՈՐՈՇՎԵՑ՝

10/03/11թ. «Շիրակ»-«Փյունիկ» խաղին «Շիրակ» թիմի ֆուտբոլիստ Արմեն Տիգրանյանի հեռացման (նույն խաղում 2 զգուշացում) համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 16-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, «Շիրակ» ֆուտբոլային ակումբին տուգանել 25000 դրամ:

11/03/11թ. «Միկա»-«Իմպուլս» խաղին «Միկա» թիմի ֆուտբոլիստ Ալեքսանդր Թադևոսյանի հեռացման (նույն խաղում 2 զգուշացում) համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 16-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, «Միկա» ֆուտբոլային ակումբին տուգանել 25000 դրամ:

1. 10/03/11թ. «Շիրակ»-«Փյունիկ» խաղին հանդիսականների կողմից մրցավարի հասցեին անվայել վիրավորանքներ թույլ տալու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 15-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ «Շիրակ» ֆուտբոլային ակումբին տուգանել 100000 դրամ:

2. Առաջարկել «Շիրակ» ֆուտբոլային ակումբին համապատասխան աշխատանքներ վարել թիմի երկրպագուների հետ՝ ապագայում վերը նշված միջադեպերից խուսափելու նպատակով: Նախազգուշացնել թիմի անվտանգության հարցերով պատասխանատուին՝ պատշաճ մակարդակով իր պարտականությունները կատարելու վերաբերյալ: